ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ապրիլի 2013թ. N-------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Նորաշեն թաղամասի (16-րդ թաղամաս) հ.34 շենքի հ.60՝ 61.68քմ. մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 26.09.2011թ. հ. 2836720 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մարգարիտա Սարգսյանին, Միեր Սարգսյանին և Գևորգ Սարգսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարգարիտա Սարգսյանը դիմել է Երևանի քաղաքապետարան Նորաշեն թաղամասի (16-րդ թաղամաս) հ.34 շենքի հ.60՝ 61.68քմ. մակերեսով բնակարանը իր անվամբ մասնավորեցնելու խնդրանքով:

Մարգարիտա Սարգսյանը հաշվառված է Նորաշեն թաղամասի (16-րդ թաղամաս/ հ.34 շենքի հ.60 բնակարանում, որը հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 26.09.2011թ. հ. 2836720 վկայական/:

Նույն բնակարանում 1985 թվականից հաշվառված են Ալբերտ Առաքելյանը և Սվետլանա Գլիշկոն, որոնք սակայն 1990 թվականից դուրս են եկել Հայաստանի Հանրապետությունից և նրանց գտնվելու վայրը մինչ օրս անհայտ է:

Համաձայն Մաշտոցի շրջանի բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին 16.09.2012թ. տրված հ.231453 տեղեկանքի նույն բնակարանում 1985թ. մշտական գրանցված են նաև Ալբերտ Առաքելյանը և Սվետլանա Գլիշկոն, իսկ 22.05.2012թ. տրված հ.293400 տեղեկանքի /17 ձևի/ և 30.11.2012թ. հ. 22/10-848 գրության, նրանք չունեն Հայաստանի Հանրապետության անձնագիր, չեն հանդիսանում ՀՀ քաղաքացի, հետևաբար չեն հանդիսանում բնակարանի սեփականաշնորհման գործընթացին մասնակցող սուբյեկտ, ինչպես նաև 1993թ. բնակարանների սեփականաշնորհման գործընթացի ժամանակ չեն հանդիսացել ՀՀ քաղաքացի, քանի որ նրանք 1990թ. դուրս են եկել Հայաստանի Հանրապետությունից և նրանց գտնվելու վայրը ներկայումս անհայտ է:

Երևանի «16 թաղ. 34» համատիրության 16.02.2012թ. տրված հ.37 տեղեկանքի համաձայն Մարգարիտա Սարգսյանի ընտանիքը 1999թ. մինչ օրս մշտապես բնակվում է վերը նշված հասցեում, իր անունով կատարում պարտադիր նորմերի /աղբահանության, վերելակի, շենքի սպասարկման/ գծով վճարումներ:

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման ղեկավարի 22/02/2012թ. հ.ԿԽ-2/660 գրության Մարգարիտա Սարգսյանի, Միհեր Սարգսյանի, Գևորգ Սարգսյանի անվամբ ՀՀ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին հինգ տարում որևէ անշարժ գույքի օտարում, կամ ձեռքբերում չի գրանցվել:

Նկատի ունենալով, որ Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն, Երևան քաղաքի սեփականությունը համարվող բնակարանները և բնակելի տները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել ՀՀ քաղաքացիներին, ովքեր մշտապես /փաստացի/ բնակվում են դրանցում՝ ներկայացնելով բնակարանը զբաղեցնելու իրավահաստատող փաստաթղթերը, ապա «Երևան համայնքի սեփականություն համարվող

բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ